



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 20 ՅՈՒՆԻՍ, 2025

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն վբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալս քու. եւ ողորմեալ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 119

ՄԻՇՏ ՔՈՒ ՕՐԷՆՔԻ ՊԻՏԻ ԳՈՎԵՐԳԵՄ

Ընդունէ ինդրանքս, Տէր,
իմաստնացուր զիս, Քու խոստումիդ համաձայն:
Լսէ աղաչանքս եւ ազատէ զիս, ինչպէս որ դուն խոստացար:
Իմ շրթներս օրհներգութիւն պիտի բղիսն անդադար,
որովհետեւ կանոններդ կը սորվեցնես ինձի:
Լեզուս երգով խօսեմքդ պիտի պատմէ,
որովհետեւ պատուէրներդ արդար են:
Ձեռքդ մեկնէ, օգնէ ինձի,
որովհետեւ կամաւորապէս հրահանգներուդ հնազանդեցայ:
Փրկութեանդ ցանկացի, Տէր, Օրէնքդ է միակ բերկրանքս:
Կեանք տուր ինձի, որպէսզի Քեզ օրհներգեմ.
Քոյ օրէնքներդ օգնեն ինձի:
Կը թափառիմ մոլորած ոչխարի պէս.
Եկուր փնտտէ զիս՝ Քու ծառայ,
որովհետեւ պատուէրներդ չմոռցայ բնաւ:

ՇԱՐՄԱՆ

*Ծով կենցաղոյս Հանապազ զիս ալէկոծէ:
Մըրըրկեալ ալիք թըշնամին ինձ յարուցանէ:
Նաւապետ բարի լեր անձին իմոյ ապաւէն:*

ԱՊՈԹՔ

Փառաբանուած երկնաւոր Աստուած, միակ արարիչ, ամենակարող տէր, ահեղ մեծութիւն, օրհնաբանելի գթութիւն, խոստովանելի ողորմութիւն, երկրպագելի բարեբարութիւն, պաշտելի ինամակալութիւն, տօնելի մարդասիրութիւն, ինկելի պահպանութիւն, անփնելի բարձր-եալ, մերձաւոր կամակատար, անկասկածելի ապաւէն, միտքար սրտերու, փարատիչ վիշտերու, ապափինիչ ցաւերու, վերջ վիատութիւններու, վե-րացում պարտքերու, կարիքները փոխարինող, կիրքերը կարգաւորող, խօսքերը յօրինող, միտքերը բովանդակող, կամքը կրթող, յուզումները զսպող: Քեզի հետ՝ հզօր ու ահաւոր Հօրդ, եւ երկրպագելի ամենակալ Հոգիիդ փա՛նք եւ գոհաբանական երկրպագութիւն, յաւիտեանս. ամէն:

ՇԱՐԱԿԱՆ - ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾ

Սուրբ Աստուած, սուրբ եւ հզօր, սուրբ եւ անմահ, որ ծնար եւ յայտնեցար վասն մեր, ողորմեա մեզ: (X 3)

Փրկել զմեզ ի փորձութենէ եւ յամենայն վրանգից մերոց:

Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք: Վասն լսելի լինելոյ Տեառն Աստուծոյ ձայնի աղաչանաց մերոց՝ բարեխօսութեամբ սուրբ Աստուածամին, եւ իջանելոյ ի վերայ մեր ողորմութեան եւ գթութեան Տեառն Աստուծոյ: Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո՛ւ եւ ողորմեա:

ՇԱՐԱԿԱՆ-ԱՂՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:

Սմենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:

Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:

Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

ՍԱՂՍՈՍ 76

ՄԵՐ ՓԱՌԱԻՈՐ ԵՒ ԱՀԱԻՈՐ ԱՍՏՈՒԱԾԸ

Ջրէաստանի մէջ ամէն մարդ կը ցանցնայ զԱստուած,

անոր հոչակը մեծ է իր ժողովուրդին մէջ:

Սաղէմի մէջ է անոր բնակարանը,

Սիոնի մէջ է անոր բնակավայրը:

Հոն էր որ ան խորտակեց թշնամիներուն բոցավառ նետերը,

անոնց վահաններն ու սուրերը, եւ պատերազմի բոլոր զէնքերը:

Լուսափայլ ես, Տէր, եւ սփանչելի՛

մինչ աւարով կը դառնաս լեռներէն,

ուր քաջամարտիկ թշնամիները զինաթափեցիր,

ուր բոլոր պատերազմիկները մահուան ֆունով ֆնացան,

իրենց ամբողջ զօրութիւնը կորսնցուցին:

Սպառնալիքդ բաւեց, ով Աստուածը մեր հայրերուն,

որ անշարժութեան մատնուին ձի ու ձիաւոր:

Ահաւոր ես Դուն, երբ բարկացած ես՝ ո՞վ դիմացդ կրնայ կանգնիլ:

Երկինքէն լսելի դարձուցիր դատաստանդ, եւ երկիրը վախցաւ ու լոեց,

երբ որ ելար դատաստան ընելու, ով Աստուած,

փրկելու համար երկրի բոլոր տառապեալները:

Մարդոց ընդդիմութիւնը գոհաբանութեան պիտի փոխուի,

Քեզի դէմ պայքարողները Քեզ պիտի օրհնաբանեն:

Տէր Աստուծոյ մատուցանեցէ՛ք ինչ որ ուխտով խոստացաք.

եւ դուք՝ շրջակայ ազգեր, ձեր նուէրները բերէ՛ք Ահաւորին,

որ կը կոտրէ իշխողներուն հպարտ հոգին,

եւ սարսափով կը լեցնէ երկրի թագաւորները:

ՕՐՈՒԲԱՆ ՆԻԹԸ



ՍԱՂՄՈՍ 76

ՄԵՐ ՓԱՌԱԳԻՈՐ ԵՒ ԱՀԱԳԻՈՐ ԱՍՏՈՒԲԱԾԸ 76:1-12

Նոյն հեղինակի գրիչէն, Ասաֆի կողմէ գրուած 76-րդ այս Սաղմոսը, շարունակութիւնն է 75-րդ Սաղմոսին: Եթէ 75-րդ Սաղմոսը հաւաքք ցոյց կու փար հանդէպ Աստուծոյ, որպէս միակ ու ճշմարիտ Դաքարորը, ապա՝ 76-րդ Սաղմոսը Աստուծոյ յաղթանակը Իր թշնամիներուն վրայ: Ուրեմն, յաղթանակի Սաղմոս է: Եթէ ամբողջ աշխարհը չիմանար ու չի ճանչնար զԱստուած, ապա հրէաստանի մէջ ամէն մարդ կը ճանչնայ, Անոր հոչակը մեծ է Իր ժողովուրդին մէջ: Ճանչնալ նաեւ կը նշանակէ մեծարել, անոր երկրպագել: Այլապէս, Առաքեալը կըսէ, «Չարերն ալ կը ճանչնան», բայց չեն երկրպագեր: Մեծարել Անոր գործերը: Այսօր, ալ կրնայ, ու այդպէս է, որ ամբողջ աշխարհը չի ճանչնար, ու չուզեր ճանչնալ, բայց Եկեղեցին, հաւաքացեալները կը ճանչնան ու կը վկայեն Անոր մեծամեծ գործերուն մասին: Այսօր մենք որքանով կը ճանչնանք զԱստուած: Չմոռնանք որ Աստուած ճանաչումը Յիսուս Քրիստոսով: Որովհետեւ առանց Իրեն չենք կրնար զԱստուած ճանչնալ:

2-րդ հմր: Անոր բնակարանը Սաղեմի մէջ է: Սաղեմ կը նշանակէ՝ Խաղաղութիւն: Ուրեմն, ո՛ր է, որ կը բնակի Աստուած, խաղաղութեան մէջ, եւ Ինք իսկ է այդ խաղաղութիւնը պարգեւողը: Իսկ Անոր բնակավայրը՝ Սիոն լեռը, այլ լեռը որուն վրայ պիտի կարուցուի Անոր փաճարը: Մա կը նշանակէ Առաքեալին բառերով. «Եթէ Աստուած մեր կողքին է, ո՛վ կրնայ մեզի հակառակ ըլլալ»:

3-րդ հմր: Հոն է որ խորպակեց թշնամիներուն բոցավառ նետերը, վահաններն ու սուրերը եւ պարերագմի բոլոր զենքերը: Ոչ թէ պիտի խորպակէ, արդէն խորպակեց: Նոյն արքայապարտիւն Յիսուս Քրիստոս կըսէ Իր աշակերտներուն. «Ինչո՞ւ ձեր սրերը կը խռովին, եւ յաղթեցի աշխարհին», ոչ թէ պիտի յաղթէ, այլ՝ յաղթեց: Որովհետեւ արդէն Աստուծոյ գործը որպէս կարարուածի: Եթէ նոյնիսկ փակաւին այդ պարերագմը չէ սկսած, բայց անոր աւարտը յստակ է, եւ յստակ է թէ որուն կը պարկանի յաղթանակը: Այսօր մենք կ'ապրինք վախի ու անորոշ վիճակի մը մէջ, թէ ինչ պիտի ըլլանք: Աստուածաշունչը կը ներկայացնէ, նախ գրուածէն աւելի ոչ ինչ, երկրորդ՝ յաղթանակը կը պարկանի մեր Տէր Աստուծոյն: Ինչ ալ ըլլան պայմաններն ու պարագաները, յաղթանակը Իրն է: Թշնամիներուն բոցավառ նետերը կը յիշեցնեն Պօղոս Առաքեալի բառերով. «Չարին արձակած միացող նետերը», որուն համար ալ կը յիշեցնէ ամենելու մեր վրայ Աստուծոյ սպառազինութիւնը: Եւ այս յաղթանակը Իր խօսքի զօրութեամբը: Այնպէս ինչպէս սրեղծագործութիւնը, ըսաւ եւ եղաւ: Քրիստոս կը յիշեցնէ Իր աշակերտ-ներուն ըսելով. «Նոյնիսկ դժոխքի դռները պիտի չկարենան յաղթահարել»: Ահա այս յաղթանակին հա-մար Անոր հոչակը կը պարմուի:

4-րդ հմր: Այսպէս համեմատական է որ կ'ընէ Ասաֆ Ասորեստանցիներուն եւ Աստուծոյ միջեւ: Անոնք իրենց յաղթանակը կ'ապահովեն ոճրագործութեամբ, սպաննութեամբ, մինչ Աստուծոյ յաղթանակը աւելի լուսավայր, Անոր յաղթանակը արդարացի օգնելու ու պաշտպանելու փրկարն ու անօգնակա-նը: Երկրաւոր թագաւորներուն յաղթանակը մի գուցէ փառաւոր ըլլայ, բայց ժամանակաւոր, մինչ Աստու-ծոյ յաղթանակը կարարեալ ու յաւիտենական:

5-րդ հմր: Ահա արդէն քաջ թուացող թշնամիները զինաթափ եղան, մահուան քունով քնացան եւ իրենց ամբողջ զօրութիւնը կորսնցուցին:

6-րդ հմր: Աստուծոյ սպառնալիքը այնքան էր, որ արդէն ձին ու ձիաւորը անշարժութեան մարմնուած: Յանկարծ եթէ հարցնենք, երբ այս բոլորը պարահեցան կամ պիտի պարահին: Անոնց պարահուճը մարդկութեան պարմութեան ընթացքին եղաւ մասնակի, նախաճաշակ մը: Վկայ մարդկութեան պարմութիւնը, ուր փարբեր պետութիւններ, կայսրութիւններ, թագաւորներ ու թագաւորութիւններ, որոնք այսօր չկան: Իսկ որպէս վերջնական կարարումը, նախորդ Սաղմոսին մէջ Աստուած յիշեցուց ըսելով. «Երբոր որոշած ժամանակս գայ»:

7-րդ հմր: Որովհետեւ Աստուած ահաւոր է, երբ բարկանայ ո՛վ կրնայ իր դիմացը կանգնիլ: Ոչ որ: Չարը ըմբոստացաւ, Աստուծոյ բարկութիւնը զինք վար, երկիր, գետնին հաւասարցուց: Ադամը ըմբոստացաւ, Դրախտի վայելքէն դուրս մնաց: Փարաւոն նոյնպէս ինք ու իր զօրքը ծովուն մէջ ընկղմեց-ցան: Ահա անոնք որոնք Քրիստոսի հովանիին փակն են, անոնք երբեք ալ վախնալու բան չունին Աս-տուծոյ բարկութեան դիմաց:

8-րդ հմր: Ահա Աստուծոյ Դաքարաւորները երկինքէն կը լսուի, եւ հագիւ երկիրը կը լսէ, արդէն լռու-թեան կը մարմնուի, ու ահով ու թողով կը բռնուի:

9-րդ հմր: Իսկ նաեւ ինչո՞ւ է Աստուծոյ դաքարաւորները, երկրի բոլոր փառապետները փրկելու հա-մար: Այնպէս ինչպէս կը կարդանք Յայրնութիւն Յովհաննու գիրքին մէջ, «մինչեւ երբ Տէր, մինչեւ

երբ պիտի մեր դպրը քեանես», մինեւ որ որոշած ժամանակս գայ: Այո, ով է որ պիտի փրկէ քարապետալը այս աշխարհի անարդար ու անողոգ վիճակէն, ամենագոր Տէրը:

10-րդ հմր: Հեղաքրքրական է այս համարը, ուր ցոյց կը քրուի, թէ ինչպիսին ալ ըլլան մարդոց ընդդիմութիւնը Աստուծոյ դէմ, աւարտին բոլորն ալ պիտի օրհնաբանեն, ինչպէս կ'ըսէ Պօղոս Առաքեալ, «Բոլորը ծունկի պիտի գան, երկնայինները, երկրայինները եւ սանդարամետրականները»: Միւս կողմէ, նաեւ առիթ դարձի, ապաշխարութեան, ի քեւ Աստուծոյ բարկութեան:

11-րդ հմր: Ահա այս բոլորի աւարտին, Ասաֆ կը յիծեցնէ, այն ինչ որ ուխտով խոստացեր էք քալու Տէր Աստուծոյ քուէք: Ռոտվիտել, այնպէս ինչպէս Տէր Աստուած հաւաքարիմ է Իր ուխտին, նոյնպէս ալ կ'ուզէ որ Իր ժողովուրդը հաւաքարիմ ըլլայ իր ուխտածին: Ոչ միայն Իր ժողովուրդը, այլ նաեւ շրջկայ միւս ազգերն ալ:

12-րդ հմր: Ռոտվիտել ի վերջոյ, ամէն հոգի Անոր ձեռքին մէջ է, երբ ուզէ կը կորսէ, երբ ուզէ կը սարսափեցնէ:

Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ ին հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ ին արարածոց եւ ինձ բազմամեղիս: